Երևանի քաղ. խորհրդի

№ 32 պարտադիր որոշումը

էլեկտր. էներգ. օգտվելու

կարգի մասին.

621.3
Ե-64

Երևան
1933

04 AUG 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

# ՅԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
# № 32 ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄԸ
## ԵԼԵԿՏՐՈԵՆԵՐԳԻԱՅԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ՅԵՎ

## ԵԼՑԱՆՑԻ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

021.3
Ե-64

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԵՎԱՆԻ ԵԼՑԱՆՑԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1933

09.04.2013
09.04.2013
10387

Գյուղհրատի տպարան
Պատվեր 283
Գլավլիտ 43-01 Տիրաժ 1200

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

# ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄ № 32

## ՅԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ

(Հաստատված նախագահության 1933 թ. հունիսի 29-ի նիստում, արձ. № 24 § 3 )

### ԵԼԵՔՏՐՈՆԵՐԳԻԱՅԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Յերևան քաղաքին, նրա թաղամասերին ու արվարձաններին ելեքտրոեներգիա մատակարարում է Քաղաքային խորհրդի Կոմմունալ բաժնին առընթեր ելեքտրոցանցի վարչությունը։

2. Ելեքտրոցանցի վարչության գրասենյակը գտնվում է Յերքաղխորհրդի շենքի առաջին հարկում։

3. Ելեքտրոեներգիայի մատակարարումն ընդհատվելու դեպքում անհրաժեշտ է անձամբ, կամ հեռախոսով թաղամասային կայաններից հրավիրել հերթապահ մոնտյորին, բացառությամբ այն դեպքերից, յերբ աբոնենտի անջատումը կատարված է Ել-ցանցի վարչության կարգադրությամբ։

4. Հաղորդալարերի մեկուսացումն աբոնենտի բնակարանում բոցավառվելու դեպքում, աբոնենտը պետք է անհապաղ միջոցներ ձեռք առնի սարքավորումն անջատելու հոսանքից, այն է՝ շրջել տախտակի վրա հաշվիչի տակ գտնվող անջատիչը, յեթե այդպիսին կա, իսկ ընդհանուր անջատիչի բացակայության դեպքում յետ պտուտակել վնասված գծից ապահովիչ խցանը, կամ կտրել յուրաքանչյուր հաղորդալար առանձին։ Մի քանի հաղորդալարերի միաժամանակ կտրելը կարող է առաջացնել դժբախտ պատահար։

5. Բոլոր ձեռնարկությունները և տները ներքին սարքավորման աշխատանքների համար պետք է ունենան իրենց մոնտյորները, վորոնք Ել-ցանցի վարչության կողմից քննության յենթարկվելուց հետո կարող են անցնել աշխատանքի։

6. Սպասարկության նպատակով բնակարանների մուտքը ամեն անգամ պետք է մատչելի լինի էլեկտրացանցի գործակալների համար:

ԾԱՆՈԹՈՒԹ. Էլ-ցանցի այն գործակալները, վորոնք չեն ունենա լիազորության վկայական և տվյալ աբոնենտի մոտ աշխատանքներ կատարելու հատուկ կարգագիր, չպետք է թույլատրել անցնելու աշխատանքի:

7. Էլ-ցանցի վարչության վերապահվում է իրավունք կատարելու ցանցի արտաքին և ներքին սարքավորման հետ կապված բոլոր անհրաժեշտ աշխատանքները այն է, ծակել պատերը, առաստաղները, տանիքը, քանդել բակերը, մայթերը և այլն, ըստ վորում Էլ-ցանցի վարչությունը պարտավոր է 10 օրվա ընթացքում կարգի բերել բոլոր քանդված տեղերը:

8. Էլեկտրացանցի գործակալներին իրենց պարտականությունների և առանձին հանձնարարությունների կատարման ժամանակ խոչնդոտներ, կամ ընդդիմադրություն հարուցելու դեպքում, անմիջապես դադարեցվում է էլեկտրոէներգիայի մատակարարումը աբոնենտին և մեղավորները յենթարկվում են դատական պատասխանատվության, բռնագանձելով նրանցից Էլ-ցանցին հասցրած բոլոր վնասները:

9. Էլ-ցանցի աշխատակիցների գործողություններից և վարմունքից դժգոհ աբոնենտները, ինչպես նաև ծագած բոլոր թյուրիմացությունների մասին անձամբ, կամ հեռախոսով պետք է հայտնեն Էլ-ցանցի վարչությանը:

10. Աբոնենտն իր մոտ գտնվող էլեկտրացանցի գույքի պահպանության և ամբողջության համար պատասխանատու է դատական կարգով:

11. Այս կամ այն տեղեկանքներ ստանալու համար, աբոնենտը պետք է դիմի Էլ-ցանցի վարչության գրասենյակը, այլ վոչ թե վորոշ հանձնարարություններ կատարելու համար ուղարկված աշխատակիցներին, վորոնք չունեն բանակցություններ վարելու համար հատուկ լիազորություններ: Գրավոր դիմումներն աբոնենտը կարող է հանձնել նաև ինկասատորներին՝ գրասենյակ ներկայացնելու համար:

12. Էլեկտրացանցը պատասխանատու չէ աբոնենտի էլեկտրասարքավորման մեջ տեխնիկական թերությունների հետևանքով հոսանքից առաջացող վնասների և դժբախտ պատահարների համար

ՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм.ССР
59681·66



13. Արգելվում է առանց էլեկտրացանցի վարչության հատուկ վկայականի վորևէ մեկին էլեկտրացանցի վրա կատարել աշխատանքներ, ինչպես օրինակ՝ սյուների, տանիքների վրա և այլն:

14. Միլիցիայի աշխատակիցների վրա դրվում է պարտականություն աջակցել էլեկտրացանցի գործակալներին իրենց վերապահված հանձնարարությունները կատարելու համար:

15. Այս պարտագիր վորոշման հոդ. 27, 37, 53, 54, նշած պատճառներով էլեկտրոէներգիայի մատակարարումից յերեք ամիս զրկված աբոնենտները մեխանիկորեն դուրս են գնում աբոնենտների ցուցակից և էլեկտրոէներգիայի մատակարարումը վերսկսվում է ընդհանուր հիմունքներով:

16. Աբոնենտն իրավունք չունի հրաժարվել իր պարտականություններից էլեկտրոէներգիայի օգտագործման կանոնների անգիտությամբ:

## ԷԼԵԿՏՐՈԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ.

17. Պլոմբավորման տուփով ինքնուրույն ճյուղավորմամբ էլեկտրասարքավորում ունեցող անձնավորություններն ու հիմնարկությունները, վորոնք վորոշ ժամանակով և վորոշ նպատակների համար Էլեկտրացանցի վարչությունից ստացել են թույլտվություն էներգիայի օգտագործման համար և քարտ, կոչվում են աբոնենտներ:

18. Հաշվիչներով էներգիա ստացող աբոնենտները կարող են օգտվել ջեռուցիչներից միայն այդպիսիններն էլեկտրացանցի գրասենյակում գրանցելուց հետո, ջեռուցիչների կարողությունը չպետք է վեր լինի 600 վատտից:

19. Էլեկտրոէներգիա ստանալու ցանկություն ունեցողները պատշաճ ձևով ներկայացնում են Էլ-ցանցի վարչությանը գրավոր դիմում սարքավորումը ստուգելու և ընդունելու մասին:

20. Ներքին սարքավորումները պետք է բավարարեն Էլ-ցանցի սարքավորման կանոնների և նորմաների պահանջներին:

21. Սարքավորումն ավարտելուց հետո Էլ-ցանցը այդպիսին ընդունում է զննման արձանագրությամբ:

22. Ընդունված սարքավորումները միացվում են ընդհանուր ցանցին բացառապես հատուկ կարգագիր ունեցող էլեկտրացանցի գործակալների միջոցով: Կարգագրերի վրա նշվում է

միացման ժամանակը, աբոնենտի բեռնավորումը՝ հաստատված վերջինի կողմից։

ԾԱՆՈԹՈՒԹ. Վոչ գործակալների միջոցով կատարված միացումը համարվում է ինքնակամ։

23. Աբոնենտի էլեքտրոսարքավորման միացումն ընդհանուր ցանցին, վոչ մի պատասխանատվություն չի դնում Էլ-ցանցի վարչության վրա, այդ սարքավորումը կանոնավոր գործելու տեսակետից։ Սարքավորման վերանորոգումը և նրա վրա հետագա հսկողություն ունենալն աբոնենտի պարտականությունն է։

24. Հրավառություններ կամ կինո սեանսներ ցուցադրող աբոնենտները պարտավոր են այդ առթիվ յերեք օր առաջ հայտնեն Էլ-ցանց-ի վարչության գրասենյակին, յեթե չունեն համապատասխան կարողությամբ հաշվիչներ։

## ԷԼԵՔՏՐՈԷՆԵՐԳԻԱՅԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

25. Էլ-ցանցն էներգիան մատակարարում է անընդհատ, բացառությամբ արտակարգ վերանորոգման, ինչպես նաև այն դեպքերից, յերբ էներգիայի մատակարարումն ընդհատվում է Էլ-ցանցից անկախ պատճառներով, ինչպես օրինակ՝ կայարաններում, գծերում, կաբելներում տրանսֆորմատորներում, ներանցումներում առաջացած ավարիաներից։

Ընդհանուր ցանցի վերանորոգման և զանազան միացումների դեպքում Էլ-ցանցն իրավասու է ընդհատել էներգիայի մատակարարումն աշխատանքների տևողության ամբողջ ընթացքում, ըստ վորում 200 կիլովատից բարձր կարողություն ունեցող սարքավորումներով խոշոր ձեռնարկություններն ընդհատման մասին պետք է նախազգուշացնեն յերկու օր առաջ։

26. Արգելվում է գոյություն ունեցող սարքավորումը վերանորոգելու կամ վորևէ փոփոխության յենթարկելու, առանց Էլ-ցանցի համաձայնության։

ԾԱՆՈԹՈՒԹ. Էլեքտրոսարքավորման փոփոխությունների և վերանորոգման նախագծերը հաստատվում են Էլ-ցանցի կողմից։

27. Հակառակ ներկա կանոններին էլեքտրոէներգիայից ոգտվելու դեպքեր հայտնաբերելու, ինչպես նաև Էլ-ցանցի կողմից անջատված սարքավորումն ինքնակամ կերպով ցանցին միացնելու համար, դադարեցվում է էներգիայի մատակարարումը



աբոնենտներին և մեղավորները յենթարկվում են դատական կամ վարչական պատասխանատվության, ըստ վորում սպառված էներգիայի արժեքը գանձվում է հայտնաբերման դեպքի առթիվ կազմված արձանագրությունում մատնանշված բեռնավորման չափով վեց ամսվա ժամանակաշրջանի համար կամ հաշված բնակարանը վարձելու օրից։

## ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

28. Սպառված էներգիայի արժեքը գանձվում է հաշվիչի ցույց տված չափի համաձայն, իսկ առանց հաշվիչի էներգիայից ոգտվող աբոնենտներից՝ ըստ լամպաների և և նրանց կարողության։

29. Սպառված էներգիայի արժեքը գանձվում է համապատասխան մարմինների կողմից հաստատված տարիֆով։

ԾԱՆՈԹՈՒԹ. Տարիֆի փոփոխությունները հրապարակվում է տեղական մամուլում։

30. Բնակարանները, կամ շենքերի սպասարկման բնույթը փոփոխելուց, համապատասխան կարգով փոխվում է նաև տարիֆը։

31. Սպառված էլեքտրոէներգիայի հաշվառման, ինչպես նաև նրա արժեքն աբոնենտներից գանձելու համար, էլեքտրոցանցը պահում է հատուկ ինկասատորներ, վորոնք յուրաքանչյուր ամսվա վորոշ օրերին այցելում են աբոնենտների բնակարանները։

32. Ինկասատորների վրա դրվում են հետևյալ պարտականությունները.

ա. Կատարել աբոնենտի հետ սպառված էներգիայի արժեքի հաշվարքը.

բ. Ստանալ աբոնենտից համաձայն հաշվառքի դրամ.

գ. Անջատել աբոնենտի սարքավորումն այն դեպքերում, յերբ համաձայն հաշվառքի ժամանակին դրամը չի վճարվում.

դ. Գրասենյակ ներկայացնելու համար աբոնենտից ընդունել գրավոր դիմումներ։

33. Աբոնենտին հատուկ վճարով տրվում է տարեկան հաշվառքային քարտ, վորը պահվում է հաշվիչի մոտ, կամ ինկասատորի համար մատչելի տեղում։ Աբոնենտն ինկասատորի առաջին պահանջմամբ պարտավոր է ներկայացնել նրան քարտը։ Արգելվում է հաշվային քարտի վրա վորևէ ջնջումներ, փոփոխություններ, կամ ուղղումներ կատարելը։

34. Սպառված էներգիայի հաշվարկումն ինկասսատորի կողմից կատարվում է ամիս առ ամիս, այդ առթիվ նշանակելով քարտի մեջ: Յեթե ինկասսատորների հաճախելու պահին աբոնենտի բնակարանը փակ կլինի կամ հաշվարկ կատարելն անհնար հաշվիչի մեխանիզմը փչացած լինելու հետևանքով, աբոնենտը պարտավոր է վճարումը կատարել նախընթաց ամսում սպառած էներգիայի հաշվով, մինչև հետևյալ հաշվարկ կատարելը:

35. Էլ-ցանցի ինկասսատորներն իրենց հետ ունենում են համապատասխան վկայական լուսանկարով՝ վավերացված կնիքով:

Աբոնենտն իրենից պահանջվելիք գումարը վճարում է ինկասսատորին, իսկ վերջինս ընդունելով դրամը համապատասխան նշանակում է անում, թե աբոնենտի հաշվարկային քարտում և թե մարշրուտային մատյանում: Ինկասսատորի ստորագրությունը պետք է լինի միանգամայն ընթեռնելի:

36. Յեթե այս կամ այն պատճառով գանձվելիք գումարը հնարավոր չեղավ անձամբ վճարելու ինկասսատորին, աբոնենտը պարտավոր է հաջորդ օրն այդպիսին մուծել Էլ-ցանցի դրամարկղը:

37. Յեթե հաշվարկը կատարելուց հետո յերկու օրվա ընթացքում աբոնենտը չի վճարում իրենից հասանելիք գումարը, էներգիայի մատակարարումը դադարեցվում է առանց նախազգուշացման և վճարելիք գումարի վրա բարդվում է տույժ՝ մեկ քառորդ տոկոսի չափով յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, սակայն տույժը չի կարող գերազանցել վճարելիք գումարի 100 %-ից:

38. Անկախ նրանից, թե քանի բնակիչներ են օգտվում մեկ հաշվիչից, հաշվարկը կատարվում է աբոնենտի անունով, վորը և պարտավոր է վճարել հասանելիք ամբողջ գումարը: Վճարված գումարի բաշխումը աբոնենտի և բնակիչների մեջ վերապահվում է իրենց:

ԾԱՆՈԹՈՒԹ. Փոխադարձ հաշվարկման նպատակով գլխավոր հաշվիչի միջոցով սպառողներն իրենց հաշվով կարող են բնակարաններում սարքավորել սեփական հաշվիչներ, սակայն այդ հաշվիչներն Էլեկտրոցանցը չի սպասարկում և էներգիայի սպառման հաշվառումը նրանով չի կատարում:

39. Հաշվիչի ճիշտ աշխատելու վերաբերյալ կասկածանքներ լինելուց, աբոնենտը պարտավոր է վոչ ուշ 7 օրվա ընթացքում գրավոր հայտնել Էլ-ցանցի գրասենյակին, այլապես այդ ժամկետից հետո



բողոքները Էլ-ցանցի կողմից հաշվի չեն առնվի: Միաժամանակ աբոնենտը մտցնում է Էլ-ցանցի դրամարկղը համաձայն սահմանված տարիֆի հաշվիչի ստուգման արժեքը, վորպիսի գումարը հաշվանցվում է հետագա վճարումների դիմաց, յեթե ստուգումից պարզվում է, վոր հաշվիչն աշխատել է անկանոն:

Յեթե հաշվիչն աշխատել է անկանոն, Էլ-ցանցը պարտավոր է միաժամանակ վերանայել ու փոխել կատարված հաշվարկը այն օրվանից, յերբ աբոնենտի կողմից ներկայացրված է բողոք: Հաշվիչի նախընթաց ամիսների ցուցմունքները և վոչ մի փոփոխության յենթակա չեն:

Հաշվիչի ստուգման հապաղման դեպքում աբոնենտը պարտավոր է ժամանակին վճարել էներգիայի լրիվ արժեքը, իսկ յեթե ստուգումից պարզվեց, վոր հաշվիչի ցուցմունքները յեղել են սխալ, ավելի գանձված գումարը հաշվանցվում է աբոնենտի հետագա վճարումների դիմաց:

40. Հաշվիչի անգործության դեպքում, կամ յեթե հաշվիչը վերցված է ստուգելու համար, հաշվարկն աբոնենտի հետ կատարվում է նախընթաց ամսում սպառված էներգիայի հաշվով, կամ փոխված, կամ սարքին հաշվիչի հետագա ցուցմունքների հիման վրա:

41. Էլեկտրոցանցից օգտվող բոլոր աբոնենտների համար սահմանվում են հետևյալ ավանսային մուծումները.

ա. Կենցաղային հաշվիչով 6 ռուբլի.

բ. Կենցաղային վոչ հաշվիչով՝ մեկ ամսվա մուծումների չափով.

գ. Հիմնարկությունների, ձեռնարկությունների և այլ կազմակերպությունների համար մուծումներ սահմանվում են սպառվող էներգիայի միջին ամսական արժեքի չափով.

Ավանսային մուծումները հաշվանցվում են սպառված էներգիայի հաշվին և տարվա վերջին հաշվարկային քարտը լուծարքի յենթարկելուց կանխավարձը յենթակա յե վերադարձման:

42. Հաշվիչի ցուցմունքը պակասեցնելու միտումով հաշվիչը փչացնելու դեպքում աբոնենտը զրկվում է էներգիայի մատակարարումից և յենթարկվում քրեական պատասխանատվության:

43. Էլեկտրական սարքավորումով բնակարաններ զբաղեցնողներն անպայման համենայն դեպս վոչ ուշ, 5 օրվա ընթացքը պարտավոր են այդ առթիվ տեղեկացնել Էլ-ցանցի վ-թյանը, վավերացված տնային լիազորության կողմից:

Աբոնենտը զբաղեցրած շենքից հեռանալու դեպքում և նույն շենքի նոր վարձակալը պարտավոր են այդ մասին գրավոր տեղեկացնել Էլ-ցանցի վարչությանը, հակառակ պարագայում Էլ-ցանցն իրավունք ունի ըստ իր հայեցողության պահանջել նրանցից մեկին ու մեկից նույն շենքում ծախսված էներգիայի արժեքի ամբողջ հետնույթը, ըստ որում Էլ-ցանցը նույնպես իրավունք ունի նոր շենք տեղափոխված աբոնենտին զրկել էներգիայից մինչև նրա կողմից պարտքերի լրիվ մարումը:

[illegible] Այն դեպքում յերբ աբոնենտի մոտ* հայտնաբերվում է [illegible] նույն [illegible] Էլ-ցանցը իրավունք ունի աբոնենտին [illegible] զրկել [illegible] մինչև նրա կողմից պարտքերի մարումը:

4[5]. Վոչ հաշվիչային տարիֆով էլեկտրական լույսից օգտվող աբոնենտները պարտավոր են գրավոր տեղեկացնել Էլ-ցանցի վարչությանը հետևյալ դեպքերում:

ա. Յեթե ցանկանում են հրաժարվել լուսավորության օգտագործումից (այդ դեպքում պարտավոր է նաև հաշվիչներով [illegible] [illegible]).

բ. Յեթե [illegible] է լուսավորության կետերի թիվը, կամ լամպերի կարողությունը, ըստ որում փոփոխությունները [illegible] ամսվա մեջ: Ամսի [illegible] փոփոխությունների, [illegible] ստացված գումարները [illegible] հաջորդ ամսվա համար.

գ. Կանոնը բացակայության մասին:

46. Հաշվիչներով աբոնենտների համար էներգիայի սպառման նվազագույն չափը սահմանվում է 5 կիլովատ ժամ:

47. Վոչ հաշվիչային տարիֆով վճարող աբոնենտներն իրավունք ունեն օգտվել լույսից որևէ ժամանակ: Նրանք իրավունք չունեն սարքավորել իրենց մոտ խրանոցներ:

Այն դեպքում, յերբ վոչ հաշվիչով էներգիայից օգտվող աբոնենտը ցանկություն կհայտնի օգտվել լույսից և ցերեկը, այդպիսին թույլատրվում է նրան՝ վոչ հաշվիչային տարիֆը կիրառելու պայմանով:

---



## ԷԼԵԿՏՐԱՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

48. Էլեկտրոէներգիայից օգտվող աբոնենտներին սպասարկելու նպատակով Էլ-ցանցին առընթեր հիմնվում է էլեկտրասարքավորման բաժին, որի պարտականությունների մեջ է մտնում ոչ արդյունաբերական բնույթ կրող էլեկտրասարքավորումների մոնտաժը:

49. Էլեկտրասարքավորումների մոնտաժը յեվ նախագծերի կազմումը Երևանում կատարվում է Էլ-ցանցի, ՎԷՕ-ի կամ իրենց ձեռնարկությունների կողմից: Մասնավոր անձնավորությունների կողմից մշակված նախագծերը յեվ էլեկտրասարքավորումները Էլ-ցանցի կողմից չեն ընդունվում:

50. Ներանցումների, տնային կանգնակների՝ հաշված ներանցման ծայրից ներքին մագիստրալ գծերի՝ մինչև պլոմբավորման տուփը ներառյալ, անջատիչների, ընդհանուր օգտագործման լամպաների, հաղորդալարերի սարքավորման, ինչպես նույնպես նախագծերի ու պլանների մշակման հետ կապված ծախսերը կատարվում են տնտեսությունների հաշվին:

51. Հաղորդալարի մոտեցումը պլոմբավորման տուփից մինչև հաշվիչը, ինչպես նույնպես ներքին կվարտալային հաղորդագծերի անցկացումը, կատարվում են բնակիչների հաշվին:

52. Հաղորդագծի անցկացնելու ծախսերի հատուցումը կատարվում է յերկու նվագ. առաջին մուծումը 50 %-ի չափով աշխատանքների սկզբին, իսկ յերկրորդը՝ էլեկտրասարքավորումը ցանցին միացնելուց հետո:

53. Յերբ տնտեսությունը կամ բնակիչները յերեք որվա ընթացքում չեն վճարի իրենց պարտքը, Էլեկտրոցանցին իրավունք է վերապահվում դադարեցնել էներգիայի մատակարարումն աբոնենտին յեվ գումարը բռնագանձել դատական կարգով:

54. Էլեկտրոէներգիայի մատակարարումը դադարեցվում է առանց հատուկ նախազգուշացման հետևյալ դեպքերում.

ա. Երբ հաշվարկը կատարելուց հետո յերկու օրվա ընթացքում աբոնենտը չի մուծում էներգիայի արժեքը.

բ. Երբ ժամանակին չեն հատուցվում Էլ-ցանցի կողմից անցկացրված հաղորդագծերի ծախսերը.

գ. Երբ էլեկտրոսարքավորման մեջ մտցրված են փոփոխություններ առանց Էլ-ցանցի գիտության.

դ. Երբ բարձր տարիֆով վճարվող սարքավորումները միացված են ցածր տարիֆի հաշվիչին:

ԾԱՆՈԹՈՒԹ. Տվյալ դեպքում սպառված էներգիայի արժեքի տարբերությունը լրացուցիչ կերպով գանձվում է բարձրացված տարիֆով՝ ընդհանուր օգտագործման ամբողջ ժամանակաշրջանի համար:

ե. Երբ Էլ-ցանցի գործակալներին աբոնենտի մեղքով չի հաջողվում 10 օրվա ընթացքում կատարելու հաշվիչի ցուցմունքների գրանցում.

զ. Էլեկտրամոտորների յեվ ջեռուցիչների օգտագործման կանոնների խախտման դեպքում.

է. Պլոմբավորման տուփի ներանցման կափարիչի պլոմբը կամ հաշվիչի կաշեպատյանը հանելու դեպքում.

ը. Երբ էլեկտրոէներգիայից օգտվել են առանց հաշվիչի՝ նրա առկայության դեպքում.

թ. Երբ միացումները կատարված են ինքնակամ.

ժ. Հաշիվները չընդունելու դեպքում.

ի. Երբ անցկացրված հաղորդագիծը շնորհիվ անսարքության վտանգ է սպառնում յեվ յերբ էլեկտրոցանցի կողմից նշանակված ժամկետում հայտնաբերված թերությունները չեն վերացվում:

55. Այս պարտադիր վորոշման հոդված 13, 18, 19, 24, 26, 47, խախտողները կյենթարկվեն վարչական կարգով տուգանքի մինչեվ 50 ռուբ., կամ հարկադիր աշխատանքների մինչեվ 15 որ ժամանակով:

56. Հինգ կիլովատից ավելի կարողություն ունեցող սարքավորումները ցանցին ինքնակամ միացնելու, ինչպես նայեվ առանց Էլ-ցանցի թույլտվության գիծերները մոտորներից օգտվողները, յենթարկվում են քրեական պատասխանատվության:



57. Այս պարտադիր վորոշման անշեղ կատարելու հսկողությունը հանձնարարվում է Էլ-ցանցի գործակալներին յեվ Քաղմիլիցիային, վորոնց կազմած արձանագրությունների հիման վրա Քաղաքային միլիցիայի վարչությունը յերեք օրվա ընթացքում կվորոշի վարչական միջոցների ներգործության յենթարկելու հարցը, նրանց չափն ու տեսակը:

58. Այս պարտադիր վորոշումն ուժի մեջ է 1933 թվի հունիս 15-ից մինչեվ վերացնելը:

*Յերևանի քաղաքային խորհրդի նախագահ՝*
*Կ. ՄԱՏԻՆՅԱՆ*

*Յերևանի քաղաքային խորհրդի քարտուղար՝*
*Մ. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ*

*1933 թ. ք. Յերեվան*

# ԿԱՆՈՆՆԵՐ

## ՅԵՐԵՎԱՆԻ ԵԼԵՔՏՐՈՑԱՆՑԻ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ.

1. Նոր հաղորդագիծ կամ գոյություն ունեցողին լրացուցիչը կառուցելու թույլտվություն ստանալու համար, անհրաժեշտ ե ելեքտրոցանցի վարչությունից ստանալ ցուցմունք. մագիստրալի ճյուղավորման տեղի, այդ ճյուղավորման հատվածքի, ինչպես նայև նախագծով սարքավորման ճաղերի թվի մասին:

2. Սարքավորումն ընդունելուց նրա եսկիզն անց ե կացվում պլանի մեջ:

3. Այն դեպքում, յերբ ելեքտրոցանցի վարչության գրասենյակում բացակայում ե խնդրատուի տան հատակագիծը, այդպիսին ներկայացնում ե ինքը խնդրատուն:

4. Բոլոր շենքերի հատակագծերն պետք ե գծված լինեն 1/100 չափացույցով կամ ունենան նշումներ շենքերի, բնակարանների սպասարկման բնույթի մասին: Առանձին բնակարանները պետք ե լինեն համարակալված:

Խոնավ, քայքայիչ գազերով, ինչպես նայև հրդեհների ու պայթումների տեսակետից վտանգավոր շենքերը պետք ե հաշվի առնվեն առանձին:

5. Հաղորդագծերի կամ ցանցերի հատակագծերի մեջ պետք ե ցույց տրվեն.

ա. Դասավորությունը, հատվածքը քառակուսի միլիմետրերով, մեկուսացման տեսակները, հաղորդալարերի թիվը կամ գլխավոր հեռավորությունները մետրերով:

բ. Հաղորդալարերի անցկացնելու յեղանակը (զանգակաձև զատիչներ, անվակներ (ռոլիկ), խողովակներ կամ այլն):

գ. Գործիքների, սարքի, լամպաների ելեքտրոշարժիչների կամ այլ ընդունիչների դասավորության տեղը՝ նշելով նաև կարողությունը:



Միացման սխեման պետք ե պարունակի իր մեջ գլխավոր հաղորդալարերի կամ ճյուղավորումների հատվածքը, բաշխական տախտակից, նշելով նրանց բեռնվածությունը ամպերներով, հատվածքը քառակուսի միլիմետրերով, կամ տարածությունը մետրերով:

6. Պլանների կամ սխեմաների մեջ համաձայն «գլավ-ելեկտրոյի» կանոնների ու նորմաների պետք ե կատարել համապատասխան նշանակումներ:

7. Պլանների մեջ պետք ե նշանակվեն յենթադրվելիք տնային ներանցումները, ինչպես նայև փողոցների դասավորությունը տների հանդեպ: Բոլոր անկյունային տները պետք ե նշագրվեն հարակից փողոցների անուններով կամ բացի այդ ունենան «անկյունային նշում»:

8. Ելեքտրոցանցի լուսավորման կամ կենցաղային սարքավորումների նորմալ լարումը հանդիսանում ե 120 վոլտ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մինչեվ մեկ ու կես կիլովատ լուսավորման բեռնվածում ունեցող շենքերում ներմուծվում ե միաֆազային ներանցում, մինչեվ 3 կիլովատ՝ յերկֆազային կամ բարձր՝ յեռաֆազային: Բոլոր ճաղերն ըստ հնարավորին պետք ե բեռնավորվեն հավասարաչափ:

9. Լարման անկումը հաղորդալարերում ներանցումից չպետք ե մեծ լինի:

ա) Խանգնակներում կամ մագիստրալներում ներանցումներից մինչեվ հաշվիչը 1/2 % լուսավորման սարքավորման կամ մանր ջեռուցիչների համար.

բ) Ներանցման տեղից մինչեվ ընդունիչը 4%՝ ելեքտրոշարժիչների կամ ջեռուցիչների համար արդյունաբերության մեջ:

Վերջին դեպքում ներանցումից մինչեվ հաշվիչը լարման անկումը չպետք ե մեծ լինի 2%-ից

Լամպերի լուսավորման հատուկ դեպքերում, յերբ միաժամանակ գործածության մեջ ե գտնվում լամպաների միայն մի մասը, վորպես բացառություն (լրիվ բեռնավորման դեպքում) կարող ե թույլատրվել այնպիսի լարման անկում, ինչպիսին ե նախատեսնված ուժային սարքավորման համար:

10. Յերբ մեկ ու կես կիլովատ բեռնավորում ունեցող սարքավորումների նախագծերը նախօրոք չեն համաձայնեցված էլեկտրոցանցի շահագործման բաժնի հետ, նրանց ցանցին միացնելու հնարավորության խնդիրը էլեկտրոցանցի վարչության կողմից քննության չի առնվում:

11. Բնակելի շենքերի էլեկտրական սարքավորումները նախատեսելիս պարտադիր կերպով հաշվի յե առնվում բնակչության կենցաղային բեռնավորումը՝ մեկ խոհանոցին (սենյակի) վոչ ավելի 300 վատտ:

## ՆԵՐԱՆՑՈՒՄՆԵՐԸ (ՎՎՈԴ)

12. Յուրաքանչյուր տուն ներմուծվում է ըստ հնարավորության մեկ ներանցում: Միայն բացառիկ դեպքերում թույլատրվում է ավելի թվով ներանցումներ:

13. Էլեկտրոցանցի վարչությունը վերապահում է իրավունք աբոնենտներին միացնելու բարձր լարման ցանցին 20 կիլովատից բարձր կարողությամբ սարքավորումով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մի քանի դեպքերում որինակ տրանսֆորմատորային տնիկից (բուդկայից) չափազանց հեռու լինելուց, էլեկտրոցանցի վարչությունը կարող է աբոնենտներին բարձր լարման հոսանք մատակարարել նույնիսկ սահմանված 20 կիլով. ցածր կարողությամբ սարքավորումով.

14. Ներանցումների տեղը ընտրելիս պետք է հաշվի առնել կանգնակների յեվ մագիստրալների բաշխման հարմարությունները, հաղորդալարերի հատվածքի տնտեսումը, փողոցներն անցնելու հնարավորությունները, շենքերի բարձր մասերը, ինչպես նայեվ սպասարկման հարմարությունները:

15. Սյուների վրա ներանցումները պատրաստվում են ունենալով կամ այլ գծային ապահովիչներով, նայած հատվածքին: Ներանցումների թիվը յուրաքանչյուր սյունից կարող է յերկուսից ավելի լինել միայն բացառիկ դեպքերում:

16. Դրսից շենքերի մեջ ներանցվող լարերը պետք է անցկացվեն առանձին ձենապակյա ձագարների միջոցով, բացվածքն ուղղված դեպի ներքեվ: Ներանցման միացնող վերջին զատիչները պետք է զետեղվեն անմիջապես ձագարների տակ, հակառակ պարագայում հաղորդալարերը պետք է կռացվեն դեպի ներքեվ՝ ջրի ազատ հոսանքի համար: Հաղորդալարերը չպետք է ճնշեն ձագարի յեզրերը, այլ մտնեն նրանց մեջ ազատ:



17. Ներանցումները կատարվում են մեկուսացված լարերով, վոչ պակաս չորս քառակուսի միլիմետր հատվածքով:

## ՄԱԳԻՍՏՐԱԼՆԵՐ ՅԵՎ ԿԱՆԳՆԱԿՆԵՐ.

18. Ներանցման տուփից անց են կացվում գլխավոր հաղորդալարերը յեվ համապատասխան հատվածքով կանգնակներ, սակայն վոչ պակաս 4 քառ. միլիմետրից: Մի ուղղությամբ թույլատրվում է գլխավոր հաղորդալարերի մեկ սխեմա (բացառությունները տես հոդված 22):

ԾԱՆՈԹՈՒԹ. Գրուպավորման տուփից մինչեվ հաշվիչը ճյուղավորումներ կատարելը թույլատրվում է վոչ պակաս 2, 5 ք. միլիմետր հատվածքով:

19. Տնային կանգնակները յեվ մագիստրալները միացվում են դրսի ներանցման հետ, ներանցման տուփի կամ բե կեծացած զոդման միջոցով:

Մեծ տներում, վորտեղ ներանցումները բազմաճյուղային են յեվ վեց քառակուսի միլիմետր բարձր հատվածքով, ինչպես նայեվ ներանցումից յերկուսից ավելի մագիստրալներ յեվ կանգնակներ հեռանալու դեպքում, ներանցման տուփի սարքավորումը պարտադիր է: Ներանցումները չպետք է ունենան գալարաձեվ վերջավորություն յեվ կախ ծայրեր:

20. Մագիստրալները բազմաճյուղային ներանցումներին միացնելիս անհրաժեշտ է հսկել ճյուղերի հավասարաչափ բեռնավորմանը:

21. Բնակիչներին սպասարկելու նպատակով գլխավոր հաղորդալարերը յեվ կանգնակները պետք է անցնեն չեզոք յեվ դիտելու համար մատչելի շենքերով:

Անհրաժեշտության դեպքում թույլատրվում է հաղորդալարեն անցկացնել բնակելի սենյակներով, սակայն անպայման Բերգմանյան խողովակների միջոցով:

ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук
ՄԵՏ ԿԵՆ ԳՐ ՊԱԼԱՏ ГОС БИБЛИОТЕКА ՀԱՍՌ-Арм.ССР

22. 750 վոլտից բարձր լարվածություն ունեցող ելեկտրոշարժիչներին միացնող հաղորդալարերը պետք է ճյուղավորել առանձին ներանցման տուփի մոտ: Ընդհանուր կանգնակներին յեվ մագիստրալներին միացումը յուրաքանչյուր անգամ կատարվում է Ել-ցանցի վարչության հատուկ թույլտվությամբ:

23. Բոլոր անշարժ հաղորդալարերը պետք է պաշտպանվեն մեխանիկական փչացումից, կամ իր սարքավորումով, կամ ծածկելով:

Հատակից յերկու մետրից ցածր բարձրություն ունեցող հաղորդալարերը պետք է անցկացված լինեն մետաղյա պատյան ունեցող խողովակներում: Պատի վրայով հատակից մի մետրից ցածր բարձրությամբ անցկացված հաղորդալարերը պետք է զրահապատել, օրինակ. ներփակել ճենապակու անուրով (վտուլկա) վերջացող գազային կամ ջրմուղու խողովակների մեջ: Այն անցքերում, վորտեղ հաղորդալարերը կարող են փչացնել կրծողները, օրինակ. հատակի միջով, հաղորդալարերը նույնպես պետք է զետեղել մետաղյա խողովակների մեջ:

24 Մագիստրալից դեպի աբոնենտի բնակարանը անցկացված ամեն մի ճյուղավորում պետք է պաշտպանված լինի համապատասխան կափարիչ ունեցող ապահովիչով յեվ համարակալված պլոմբներ դնելու համար:

Մեկ սենյակ զբաղեցնող յեվ առանց հաշվիչների լամպաներ ունեցող աբոնենտների համար, խրանոցային կետերի բացակայության դեպքում թույլատրվում է հաշվիչի փոխարեն ունենալ հոսանքը սահմանափակող սարքավորում, Հոսանքի սահմանափակիչի կոնստրուկցիայում ապահովիչների առկայության պայմաններում, բաշխիչ տախտակի դնելը մի խմբավորման դեպքում, պարտադիր չէ:

25. Ապահովիչներ ունեցող պլոմբավորման տուփը զետեղվում է չեզոք յեվ միշտ մատչելի բնակարաններում՝ հատակից յերկու յերեք մետր բարձրության վրա (ընդհանուր օգտագործման միջանցքներում, միջանցիկ սենյակներում սանդղախցերում, պատշգամբներում յեվ այլն:



## ՀԱՇՎԻՉՆԵՐ ՅԵՎ ՀՈՍԱՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԻՉՆԵՐ.

26. Հաշվիչը պետք է զետեղվի այնպիսի բարձրության վրա, վորպեսզի հաշվեցույցի բարձրությունը հատակի մակարդակից վեր չլինի 1,8 մետրից: Հոսանքի սահմանափակիչները զետեղվում են հատակի մակարդակից վոչ ավել 2,3 մետր բարձրության վրա:

27. Հաշվիչի համար տեղ է հատկացվում չոր բնակարաններում հիմնական պատերի վրա յեվ աբոնենտներին սպասարկելու նպատակով մուտքը դեպի նրան պետք է լինի ազատ յեվ մատչելի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յերբ հիմնական պատ չկա յեվ կամ պատը դեպի շենքը տանող ներանցման տեղից 6 մետր ավելի հեռավորության վրա յե գտնվում, այդ դեպքում հաշվիչի համար տեղ կարելի է հատկացնել ամրացված փայտե պատի վրա յեվ ըստ հնարավորության հեռու դռան յեվ պատուհանի ականոցից (պրոյոմ :

28. Հաշվիչը վոչ մի դեպքում չպետք է զետեղվի ծխանցքների, օդափոխման անցքերի, պլիտաների, ծորակների (րակովինա) վրա, դռան անկյունում, բաց պատշգամբներում, ինչպես նայեվ հարվածների, ցնցումների, կամ վորեվե մեխանիկական փչացումների յենթակա տեղերում:

29. Հաշվիչները յեվ հոսանքի սահմանափակիչները պետք է լինեն այնպես զետեղված, վորպեսզի տարածությունը հարեվան պատից մինչեվ սարքն յերկու կողմից լինի վոչ պակաս 15 սանտիմետր:

30. Հաշվիչները յեվ հոսանքի սահմանափակիչները միացնելու համար անհրաժեշտ է թողնել վոչ պակաս 25 սանտիմետր յերկարությամբ ծայրեր: Մինչ հաշվիչը ճյուղավորման վրա զետեղվում է ապահովիչ պլոմբավորման տուփ, իսկ կերիչներ յեվ անջատիչներ դնել արգելվում է: Պետք է խուսափել կատարելու դեպի հաշվիչները տանող մագիստրալների զոդումից յեվ միայն ծայրահեղ դեպքերում թույլատրվում է զետեղել նրանց հաշվիչից առնվազն 2,5 մետր հեռավորության վրա:

Այն դեպքերում, յերբ հնարավոր է հաշվիչի մեխենա-

յական փչացում կամ փտում կեղտոտելը, հալվիչն անհրաժեշտ է պաշտպանել այնպիսի չափի պահարանով, վորպեսզի հնարավոր լինի ծայրերն ազատ դուրս բերել հալվիչից, կամ թե հանել ամբողջ հալվիչը:

Նույնպիսի, սակայն փակ պահարանով պաշտպանվում է նաև տներում գտնվող հալվիչը, վորտեղից հնարավոր է նրա հափշտակումը (ձետքին մուտքերում, անցուղարծի միջանցքներում յեվ այլն):

Սարքավորման բեռնավորման յուրաքանչյուր փոփոխության մասին անհրաժեշտ է անհապաղ հայտնել ելեկտրոցանցի վարչությանը:

## ԽՄԲԱԿԱՅԻՆ ՎԱՀԱՆԻԿՆԵՐ ՅԵՎ ԱՊԱՀՈՎԻՉՆԵՐ.—

**31.** Հալվիչից հետո նրանից վոչ հեռու մեկ մետր տարածության վրա պետք է զետեղել գլխավոր կամ խմբակային ապահովիչներ՝ բեռնավորմանը համապատասխանող սարքին խցաններով, սակայն վոչ ավելի դրված հալվիչի կարողությունից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն դեպքերում, յերբ խմբակային ապահովիչները զետեղված են հալվիչից մեկ մետրից ավել հեռավորության վրա, նրանց մինչ հաղորդագիծն անցկացվում՝ Բերկմանյան խողովակների միջով, կամ կապարապատ հաղորդալարով:

**32.** Հալվիչից մինչև խմբակային կամ ընդհանուր ապահովիչներն անցկացված հաղորդագիծը պետք է շինված լինի անցնող հոսանքին համապատասխանող հատվածքի հաղորդիչով, սակայն վոչ պակաս 2,5 քառ. միլիմետրից, ձգված անվակների վրա, յուրաքանչյուր հաղորդիչ առանձին կամ ճենապակու անուրով վերջացած Բերկմանյան խողովակով, ըստ վորում յերկու հաղորդալարերի (մեկուսացումը, պետք է լինի առնվազն Պ. Ր.: Հաղորդալարերի հատվածքը պլոմբավորման տուփից մինչև խմբակային վահանիկը պետք է լինի անփոփոխ: Յերբ Բերկմանյան խողովակն ունի արույր պատյան (լատուննայա օբոլոչկա), հաղորդալարերի անցկացնելը թույլատրվում է առանձին խողովակներով:



**33.** Բազմաֆազային սարքավորման ժամանակ պետք է դնել խմբակային ապահովիչներ, բաժանելով նրանց առանձին ֆազերի, ըստ վորում ֆազերի հավասարաչափ բեռնավորման համար ցանկալի յե, վոր միաֆազային խմբակները լինեն բազմապատիկ ֆազերի թվին:

**34.** Յուրաքանչյուր խմբակի համար թույլատրվում է մինչև 10 ամպեր բեռնավորում:

**35.** Արգելվում է անգամ ժամանակավորապես ապահովիչները փոխարինել հալվող մետաղալարով, ինչպես նաև գործածել կափարիչ ունեցող ապահովիչներ, վորոնք հնարավորություն են տալիս փոխարինելու կապարալարով:

## ՀԱՂՈՐԴԱԼԱՐԵՐԻ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

**36.** Բոլոր լարերը բացառությամբ կապարապատ յեվ զրահապատ մալուխների, պետք է ձգված լինեն մեկուսիչ հենարանների վրա (զատիչներ, անվակներ):

Հաղորդալարերի անցկացնելու յեվ ամրացման համար անհրաժեշտ է ղեկավարել հետևյալ աղյուսակով.—

| Բնակարան | Մեկուսացում | Անցկացնելու յեղանակը |
|---|---|---|
| 1. Դրսից | Մի հաղորդիչ<br>Ստորին մեկուսացում<br>Միջին մեկուսացում<br>Բարձր մեկուսացում | Զատիչների վրա |
| 2. Խոնավ | Ստորին մեկուսացում<br>Միջին մեկուսացում<br>Բարձր մեկուսացում | Զատիչների վրա<br>Զատիչների վրա<br>Անվակների վրա |
| 3. Չոր, առանց տաքացնելու | Ստորին մեկուսացում<br>Միջին մեկուսացում<br>Բարձր մեկուսացում | Զատիչների վրա<br>» »<br>Անվակների վրա |
| 4. Չոր | Ստորին մեկուսացում<br>Միջին մեկուսացում<br>Բարձր մեկուսացում | Զատիչների վրա<br>Անվակների յեվ զատիչ խողովակներով անվակների վրա, զատիչ յեվ մետաղյա խողովակներով |

ԾԱՆՈԹՈՒԹ. — Այնպիսի հաղորդալարեր անցկացնելիս, վորոնց մեկուսացումը չի համապատասխանում բնակարանի տեսակին, այդպիսիները պետք է դիտվեն վորպես մերկ:

37. Բլորալարի հեռավորությունը պատից պետք է լինի առնվազն 10 միլիմետր:

38. Անվակների միջեվ տարածությունը պետք է լինի վոչ ավելի 80 սանտիմետրից:

39. Կապման տեղը պետք է պաշտպանված լինի զատիչ ծապաշենով: Վորպես կապման նյութ բացառապես թույլատրվում է կլեկած մետաղալար:

40. Բարդ հաղորդալարերը պետք է ամրացնել այնպես, վորպեսզի առանձին ջիղերը մեկը մյուսին ճնշե-ուց՝ չվնասվի նրանց մեկուսացումը: Վոչ գրահպատված բարդ հաղորդալարերի համար մետաղյա կապ չի թույլատրվում:

41. Արգելվում է միեվնույն գամիչին ամրացնել մեկ հաղորդալարից ավելին:

42. Անվակները պետք է պինդ ամրացված լինեն պատին, առաստաղին յեվ այլն:

Անվակների ամրացումը վոչ մի դեպքում չպետք է կատարվի մեխերով, այլ միայն պտուտակներով, կամ ամրացման միակերպ լավ յեղանակով:

43. Փայտե պատերի միջով անցնող բլորալարերը պետք է զետեղված լինեն Բերկմանյան խողովակներում, ընդ վորում խողովակների ծայրերը պետք է դուրս գան պատից վոչ պակաս առնվազն 15 միլիմետր յեվ մետաղյա ծածկը ծայրերում պետք է կտրված լինի 10 միլիմետրով:

44. Չի թույլատրվում բլորալարերի յեվ լարերի շփում պատին, հեշտ բռնկվող առարկաներին, ինչպես նայեվ նրանց կախելը:

45. Բլորալարերի յեվ լարերի ազատ ծայրերը պետք է լինեն կամ անջատված կամ ունենան պահանգ (արմատուրա):

46. Կախովի լամպաները պետք է ունենան ճենապակու վարդակ (ռոզետկա), իսկ նրանց կոթառները՝ նի-պելլներ ճենապակյա միջադիրներով (պրոկլադկա):



47. Անվակները, բլորալարերը, լարերը յեվ ապա-հովիչները պետք է միշտ լինեն մաքուր յեվ չներկված:

48. Վաննային սենյակներում, խոհանոցներում, հանգարներում (սարայ) լվացքատներում յեվ ընդհանրապես խոնավության յենթակա տեղերում բլորալարերի գործածությունը չի թույլատրվում:

49. Բաց բնակարաններում, որինակ՝ տնային ար-տաքնոցներ, խոհանոցներ, ձեղնահարկեր, սանդուղքներ, գործ են ածվում անջատիչներ ճենապակյա կամ հախճա-պակյա կոթերով:

Դրսի կողմից յեվ խոնավ շենքերում, ինչպես որի-նակ՝ ախոռատներում, հանգարներում, սառցարաններում, ներքնատներում թույլատրվում է գերմետիկ կոթառների յեվ անջատիչների սարքավորում: Բաղնիքներում, լողանալու սենյակներում յեվ ընդհանրապես առանձնապես խոնավ բնակարաններում բանալիով կոթառներ կամ անջատիչներ դնել չի թույլատրվում:

Ձեղնահարկային հաղորդագծեր անցկացնելուց, հա-ղորդալարերը պետք է ձգված լինեն ծպեղների (ստրոպիլա) տակից կամ կողքերից, կամ առանձին փահանիչների ծածկված պատյանով (ճուսյար):

Պետք է խուսափել հոսանքի տակով հաղորդալարեր անցկացնելուց: Դրա անհրաժեշտության դեպքում, հաղոր-դալարերը պետք է անցկացված լինեն չընդհատվող գեր-մետիկ խողովակաշարով, կամ թե պետք է գործածել գրա-հապատ զատիչ:

50. Միջնեվ զանգակային («Դինամ» տրանսֆորմատորը) պետք է զետեղված լինի յերկբեվեռային ապահովիչ մեկ ամպեր խզանով: Զանգակային ազդարար դնելուց.

ա) հաջորդական միացման յեղանակով՝ լրացուցիչ դիմադրության զանգակի կամ շիկացման լամպայի հետ

բ) ավտո-տրանսֆորմատորների միջոցով միացնելու յեղանակով, վորի ժամանակ զանգակային ազդարարն առանց բացառության անց է կացվում այն տեխնիկական կանոնների հիման վրա, վորպիսին գոյություն ունի լու-սավորության սարքավորման համար, այսինքն-բլորալարով կամ հաղորդալարով, ընդ վորում կոճակները պետք է լինեն

ձենապակյա՝ ամրացված Էբոնիտի վրա։ Զանգակային տրանսֆորմատորներից, ավտո-տրանսֆորմատորների լրացուցիչ դիմադրությունների մեկուսացումը պատից պարտադիր է։

ԾԱՆՈԹՈՒԹ.—Վոչ հաշվիչային սակագնով էներգիա օգտագործելուց, զանգակային ազդարար թույլատրվում է բացառապես «Գնոմ» տրանսֆորմատորի միջոցով։

51. Արդեն պատրաստված յեվ սարքավորման մեջ տեխնիկական թերություններ նկատելու դեպքում, այդպիսին կարող է անջատվել ցանցից առանց նախազգուշացման, յերբ Ել-ցանցի վարչության կողմից նշանակված ժամկետում թերությունները չեն վերացվում։ Սարքավորումը նորից Ել-ցանցի վարչության կողմից միացվում է, միայն նկատված թերությունները վերացնելուց հետո։ Այն դեպքերում, յերբ սարքավորման դրությունը սպառնում է վտանգ, այդպիսին անջատվում է անմիջապես։

ԾԱՆՈԹՈՒԹ.—Բոլոր թերությունները վերացվում են աբոնենտի միջոցով յեվ հաշվին։

## ԷԼԵՔՏՐՈՇԱՐԺԻՉՆԵՐ ՅԵՎ ԽՈՇՈՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ.

52. Բոլոր էլեքտրոշարժիչները սարքավորվում են յեռաֆազային հոսանքների համար 3.380 կամ 3 220 վոլտ 50 ժամանակամիջոցներ մի վայրկյանում (պերիոդ)։ Խոշոր ուժային սարքավորումները միացվում են բարձր լարման ցանցին 3.6000, 3.6300 յեվ 3.6600, նայելով Ել-ցանցի լարմանը։

ԾԱՆՈԹՈՒԹ.—Միաֆազային մոտորները թույլատրվում են 250 ուատտից վոչ բարձր կարողության համար (1/3 ձիու ուժ)։

53. Մինչեվ 1,5 ձիու ուժանոց էլեքտրոշարժիչները թույլատրվում են կարճ փակիչ խարիսխով, մինչեվ 5 ձիու ուժանոց՝ կարճ փակիչ խարիսխով, սակայն շարժիչների գործարկումը կատարվում է փոխանցման միջոցով աստղից յեռանկյունու վրա։ 5 ձիու ուժից բարձր կարողության ունեցող շարժիչները պետք է ունենան խարիսխ (ռոտոր) կոնտակտային օղակներով յեվ ռեոստատ։



54. Յերբ էլեքտրոշարժիչները մատակարարվում են էներգիայով հատուկ տրանսֆորմատորներից, Ել-ցանցի վարչության առանձին համաձայնությամբ թույլատրվում են շարժիչներ 5 ձիու ուժից բարձր կարողությամբ կարճ փակիչ խարիսխով։

55. Ամբարձակային մեքենաների համար թույլատրվում են էլեքտրոշարժիչներ միայն կոնտակտային օղակներով յեվ գործարկման (պուսկովոյ) ռեոստատով։

56. Անհրաժեշտության դեպքում Ել-ցանցի վարչությունը կարող է պահանջել սնահոլովակի (խոլոստոյ շկիվ) կամ ուրիշ գործարկման հարմարանքի սարքավորում։

57. Այն դեպքերում, յերբ Ել-ցանցի վարչությունը կգտնի այդ անհրաժեշտ նա իրավունք ունի պահանջել մաքսիմալ ավտոմատիկ անջատիչներ դնելու։

58. Բարձր լարման էլեքտրոշարժիչները պետք է վըստահելի կերպով առնվազն 25 քառ. միլիմետր հատվածք ունեցող պղնձալարերով հողակցվեն, ըստ վորում հողակցված հաղորդալարը պետք է պաշտպանվի հնարավոր վնասումներից։

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ.

59. Ժամանակավոր բնույթ կրող սարքավորումները կարող են շեղվել այս կանոններից։ Գծագրերի ներկայացնելն այս դեպքերում պարտադիր չէ, սակայն սարքավորումը նախապես պետք է համաձայնեցված լինի Ել-ցանցի վարչության հետ։

60. Ել-ցանցի կողմից ընդունվող սարքավորումը պետք է լինի լրիվ ավարտված, բոլոր կողումները յեվ միացումները պետք է լինեն կատարված յեվ տվյալ աբոնենտը միացվում է ցանցին խցաններն ապահովիչների կոթառների մեջ պտուտակելու միջոցով։

61 . Տեխնիկը սարքավորման ընդունելուց այդպիսին անց է կացնում պլանի մեջ։

62. Ժամանակավոր բնույթ կրող շենքերում հին յեվ էժանագին տներում անցկացված սարքավորումները ընդունվում են «գյուղական յեվ ժամանակավոր սարքավո-

րումների մասին» ՎԵՌ-ի կողմից հաստատված նորմա-ներով յեվ կանոններով:

63. Այս կանոնադրությամբ չնախատեսնված միաց-յալ բոլոր դեպքերում պետք ե ղեկավարվել վերջին ելեքտրո-տեխնիկական համագումարի վորոշումներով:

ՅԵՐԵՎԱՆԻ ԵԼԵՔՏՐՈՑԱՆՑԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ՝
Ա. ԴԱԶԱՐՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ՝
Ա. Տ. ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ

1933 թ. Յերեվան

Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР

Ca 34-1/603

1
2

# ԱՌԱՋԱՎՈՐՈՒ
# ՆՈՐԻՆ
# ԼԱՅ
# ՏԱՐԱԾՈՒ

ԵՐ

ՀՀ Ազգային գրադարան
NL0272225

10387